Եթէ ճաշակել էք որ Տէրը քաղցր է: 4 Որին մօտեցել էք՝ այն կենդանի Վէմին, որ թէև մարդկանցից անարգուած, բայց Աստուծոյ մօտ ընտրուած և պատուական է: 5 Դուք էլ կենդանի քարերի պէս շինուեցէք հոգևոր տաճար, սուրբ քահանայութիւն, որ հոգևոր պատարագներ մատուցանէք Աստուծոյ ընդունելի՝ Յիսուս Քրիստոսի ձեռով: 6 Որովհետև գրքումն էլ կայ, թէ Ահա Սիօնումն անկիւնի գլուխ՝ ընտիր պատուական քար եմ դնում, և նորան հաւատացողը չի ամաչիլ: 7 Արդ՝ ձեզ հաւատացեալներիդ պատուականութիւնն է. Բայց անհաւատներին այն քարը որ շինողներն անարգեցին, նա անկիւնի գլուխ եղաւ. 8 Եւ գլորման քար, և գայթակղելու վէմ որ գայթակղում են խօսքին չ՚հաւատալով. որ նորա համար էլ գրուած են:

Մոտեցեք կենդանի Վէմին

1. Հիսուսը մեր Ժայռն է (Հիմքը)

- «Ժայռ» բառն օգտագործվում է 24 անգամ Սաղմոսների գրքում Աստծո վերաբերյալ:
  - Մովսեսն առաջինն էր Աստվածաշնչում, ով օգտագործեց «ժայռ» բառը փոխաբերական իմաստով՝ ի նկատի ունենալով Աստծուն: «Աստծո (անգլ՝ Ժայռի) գործը կատարյալ է, որովհետև Նրա ամեն ճանապարհները իրավունք են» (Երկրորդ Օրինաց 32:4, հմմտ. խս. 13, 15, 18, 30, 31, 37):
  - Աննան աղոթեց. «Տիրոջ պես սուրբ չկա, որովհետև Քեզանից ջոկը չկա, և մեր Աստծո պես վեմ չկա» (Ա Թագավորաց 2:2):
  - «Տեր, իմ վեմ, և իմ բերդ և իմ ազատիչ, իմ Աստված, իմ ամրություն, որին ես հուսացած եմ: Ով իմ ասպար և իմ փրկության եղջյուր, Նա իմ բարձր աշտարակն է» (Սաղմոս 18:2):
- Աստված նույնպես մեր ապաստանն է: Ինչպես Մովսեսը, մենք կարող ենք թաքնվել «Ժայռի» խոռոչի մեջ: Աստված հոգ կտանի մեզ համար:

2. Կառուցեք ձեր տունը Ժայռի վրա

- Ա Կորնթացիների 3:11. «Որովհետև ոչ ով ուրիշ հիմք չի կարող դնել, քան թե որ դրված է, որ է Հիսուս Քրիստոսը»:
- Նա հիմքն է, գլխավոր անկյունաքարը: Նա գայթակղության վեմ է այն մարդկանց համար, ովքեր մերժում են Նրան, բայց հոգևոր ժայռ՝ այն մարդկանց համար, ովքեր հնազանդվում են Նրան (Եփեսացիների 2.20, Հռոմեացիների 9:33, Ա Պետրոս 2:8, Ա Կորնթացիների 10:4):
- Կողոսացիների 2:6-7. «Ուրեմն, ինչպես Քրիստոս Հիսուս Տերն ընդունեցիք, Նրանում գնացեք. Արմատացած և Նրանում շինված, և հավատքում հաստատված, ինչպես որ սովորեցիք՝ աճելով Նրանում գոհությունով:»

3. Մեր անսասան հիմքը երբեք չի ընկնի

- Եբրայեցիների 12:28-29. «Ուստի անշարժ թագավորություն ընդունած լինելով, պինդ բռնենք այն շնորհքը…
- Մատթեոս 16:18. «Ես էլ ասում եմ քեզ, որ դու ես Պետրոս, և այդ վեմի վրա կշինեմ Իմ եկեղեցին, և դժոխքի դռները չեն հաղթի նրան»: